ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

«ՀՀԿԳՄՍՆԴՄ-11016» ծածկագրով անցկացվող մրցույթում ներկայացված երկրորդ դասարանի «- - - - - - - - - - - - - -» դասագրքի «Բովանդակային գնահատման փուլի»

Գնահատող հանձնաժողովի անդամ՝ հայոց լեզվի մասնագետ

Գնահատողի անունը, ազգանունը, հայրանունը _____

Բնութագրի չի համարը	Չափանիշ/բնութագրիչ	Տրվող միավորը՝ 0-3 *	նշումներ **
	Թղթային դասագիրք		
	Չափանիշ 23. Շարադրման լեզուն համապատասխանում է տվյալ տարիքի սովորողների լեզվական կարողությունների՝ չափորոշիչներով նախատեսված մակարդակին:	X	
23-1	Տարրական դասարաններում շարադրման լեզուն պարզ է, մատչելի, սահմանումները քիչ են, բացատրված :		
23-2	Մեկ թեմայի շրջանակում անծանոթ բառերը նպատակային և պարբերաբար կրկնվում են, ինչը նպաստում է բառապաշարի ամրապնդմանը և զարգացնում է սահուն կարդալու կարողությունները:		
23-3	Հարցերն ու առաջադրանքները 1-2-րդ դասարաններում շարադրված են հիմնականում պարզ ընդարձակ նախադասություններով, իսկ 3-4-րդ դասարաններում երբեմն կարող են գործածվել նաև բարդ նախադասություններ, որոնք չունեն երկակի և վերացական իմաստ:		
23-4	Առաջադրանքները ձևակերպված են հրամայական եղանակի եզակի/հոգնակի 2-րդ դեմքի բայաձևերով, դրանց քայլերը տրված են ամենայն մանրամասնությամբ:		

	Չափանիշ 24. Շարադրման լեզուն համապատասխանում է ժամանակակից գրական լեզվի տվյալ տարիքի սովորողներին ծանոթ նորմերին/բացառությամբ հեղինակային մեջբերումների/:	X	
24-1	Տեքստերում նպատակային է բարբառային, խոսակցական բառերի գործածությունը:		
24-2	Կիրառված եզրույթներին զուգահեռ՝ փակագծերում տրված են դրանց հանրայնորեն ընդունված հայերեն համարժեքները (եթե առկա են):		
24-3	Դասագրքում պահպանված է լեզվական կանոնակարգվածությունը՝ ուղղագրական, կետադրական, քերականական կանոնների պահպանմամբ:		
	Չափանիշ 25. Տեքստերը ծանրաբեռնված չեն նոր եզրույթներով ու անծանոթ բառերով, նոր բառերն ու հասկացությունները ներմուծվում են աստիճանաբար և բացատրվում են:	X	
25-1	1-2-րդ դասարանների դասագրքերի յուրաքանչյուր բաժնում/առարկայի թեմատիկ միավորման մեջ անծանոթ բառերը պետք է չգերազանցեն 10-15-ը, իսկ 3-4-րդ դասարաններում՝ մինչև 25-ը: Դրանք զետեղված պիտի լինեն դասագրքի վերջում առկա բառարաններում:		
25-2	Մեկ թեմայի շրջանակում կիրառված են 3-ից ոչ ավելի եզրույթներ, 4-ից ոչ ավելի տեղանուններ:		
	Չափանիշ 26. Շարադրանքը զերծ է ոչ հստակ, բազմիմաստ, տարընկալում առաջացնող ձևակերպումներից:	X	
26-1	Գործածված բառերի իմաստները հստակ հասկանալի են տվյալ համատեքստում:		
26-2	Հասկացություններն ունեն միատեսակ անվանումներ:		
26-3	Բացատրությունները տրված են հնարավորինս մատչելի և հակիրճ, լրացուցիչ բացատրության և պարզաբանման կարիք չունեն: Օրինակները կիրառելի են և հասկանալի:		

	Չափանիշ 27. Տեքստերում օգտագործված են ուշադրություն գրավող, իմացական ոլորտի զարգացմանը նպաստող, դրական հույզեր առաջացնող արտահայտություններ և ասույթներ:	X	
27-1	Առկա են բարեկիրթ շփմանը, սեփական հույզերի արտահայտմանը, ապրումակցմանը նպաստող արտահայտություններ:		
27-2	Առկա են պատկերավորման որոշակի համակարգ ունեցող տեքստեր, որոնք ընդլայնում են սովորողի երևակայությունը, մտահորիզոնը, ստեղծարարությունը:		
27-3	Առկա են թեմային վերաբերող հետաքրքիր, հուզական երանգ ունեցող հավելյալ տեքստեր:		
	Չափանիշ 28. Օգտագործված բառապաշարը և ձևակերպված մտքերը ճշգրիտ են արտահայտում տվյալ ուսումնական առարկայի բովանդակությունը	X	
28-1	Ձևակերպումները հասկանալի են, հստակ ու ընկալելի են դարձնում ուսումնական նյութը:		
28-2	Տեսական նյութում կիրառված է հանրամատչելի բառապաշար:		
	Չափանիշ 29. Նոր եզրույթների ու նոր գաղափարների ներմուծումը արտացոլված է վերջնարդյունքներում:	X	
29-1	Նոր եզրույթները և գաղափարները ներմուծված են աստիճանաբար, բխում են ծրագրից:		
29-2	Նոր եզրույթների և գաղափարների ներմուծումը նպատակային է և հիմնավորված, բխում է վերջնարդյունքներից:		
	Չափանիշ 30. Ուսումնական տեքստերում օգտագործված են տվյալ ուսումնական առարկային և բնագավառին բնորոշ բառեր, հասկացություններ, եզրույթներ, խոսքային կառույցներ, որոնք սովորողներին հնարավորություն են տալիս յուրացնելու տվյալ բնագավառի կամ գիտության «լեզուն», ընդլայնելու ու բազմազան դարձնելու սեփական լեզվական պաշարն ու խոսքային հնարավորությունները	X	
30-1	Տեքստերում առկա կառույցները, թեմատիկ բառապաշարը ներառված են խաղերում և գրավիչ/ հետաքրքրական առաջադրանքներում:		

	Չափանիշ 31. Դասագրքի շրջանակում պահպանված է տեքստերի փոխադրման, տեղայնացման, մեջբերման միասնական ոճ	X	
31-1	Դասագրքի շրջանակում պահպանված է տեքստերի փոխադրման միասնական ոճ (նշված է հեղինակը կամ աղբյուրը, կիրառված է «ըստ» ձևը)		
31-2	Դասագրքի շրջանակում պահպանված է տեքստերի տեղայնացման միասնական ոճ (խոսքային կառույցներն ու առանձին բառեր համապատասխանեցված են հայերենի լեզվամտածողությանը)		
31-3	Դասագրքի շրջանակում պահպանված է տեքստերի մեջբերման միասնական ոճ (պահպանված են ուրիշի խոսքի կիրառության կանոնները, նշված են հղումները, ինքնանպատակ չեն, հիմնավորում են ասելիքը)		
	Չափանիշ 32. Առկա են տվյալ ուսումնական առարկայի թեմատիկայի շրջանակում բանավոր և գրավոր խոսքի ճշգրտությունը, հստակությունը, պարզությունը, պատկերավորությունը ապահովելու կարողությունների զարգացմանը նպաստող նյութեր, հարցեր և առաջադրանքներ	X	
32-1	Հարցերը և առաջադրանքները միտված են բանավոր և գրավոր խոսքի զարգացմանը (պատկերավորությանը, երևակայությանը, ստեղծարարությանը):		
32-2	Տվյալ ուսումնական առարկայի թեմատիկայի շրջանակում առկա են բանավոր և գրավոր խոսքի ճշգրտությանն ու հստակությանը նպաստող առաջադրանքներ, որոնց միջոցով ամրապնդվում է նյութը:		
32-3	Տվյալ ուսումնական առարկայի թեմատիկայի շրջանակում առկա են տեսածի, լսածի, կարդացածի մասին շարադրանք գրելու և վերաբերմունք դրսևորելու առաջադրանքներ, որոնք առնչվում են իրական կյանքին:		
32-4	Առկա են իմացական ոլորտի զարգացմանը նպաստող առաջադրանքներ՝ առցանց միջոցներով պատրաստված խաղեր, ճանաչողական բնույթի տեսանյութեր,		
32-5	Առաջադրանքներն ու հարցերը նպաստում են միջառարկայական և ներառարկայական կապերի ստեղծմանն ու զարգացմանը:		

32-6	Հարցերն ու առաջադրանքները բաշխված են համաչափ/յուրաքանչյուր թեմայում՝ միջինը 2-3-ական հարցադրում և առաջադրանք/		
	Չափանիշ 33. Առկա են մտքերը գրավոր և բանավոր շարադրելու /ըստ պլանի/ տեքստեր	X	
33-1	Առկա են տեքստերը վերաշարադրելու, համառոտագրելու, ուղղումներ կամ լրացումներ կատարելու առաջադրանքներ:		
33-2	Առկա են հաղորդման կամ զեկուցման տեքստեր գրելու առաջադրանքներ:		
	Չափանիշ 34. Առկա են բարեկիրթ և գրագետ բանավեճ վարելու տեքստեր	X	
34-1	Առկա են հարցադրումներ /բաց և փակ/:		
34-2	Տրված են դիտողություն, առարկություն, կարծիք/դիրքորոշում ձևակերպելու պարզ առաջադրանքներ:		
	Չափանիշ 35. Առկա են ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն առաջացնող տեքստեր	X	
35-1	Առկա են արժեհամակարգային, ինքնաճանաչողական և աշխարհընկալմանը նպաստող նյութեր, որոնք հետաքրքրություն են առաջացնում ընթերցանության նկատմամբ:		
35-2	Առկա են հետաքրքրաշարժ հարակից նյութեր, լրացուցիչ գրականության ցանկեր:		
Դասագրքի բովանդակությունը լրացնող այլ ուսումնական նյութեր			
	Չափանիշ 60. ՈՒսումնական նյութերի ներկայացման լեզուն համապատասխանում է սովորողների տարիքին, լեզվամտածողությանը և նրանց խոսքի մշակույթի զարգացման նպատակին	X	
60-1	Ուսումնական նյութերի ներկայացման լեզուն համապատասխանում է տվյալ տարիքի սովորողների լեզվական կարողությունների՝ չափորոշիչներով նախատեսված մակարդակին		

60-2	Ուսումնական նյութերի ներկայացման լեզուն համապատասխանում է ժամանակակից գրական լեզվի՝ տվյալ տարիքի սովորողներին ծանոթ նորմերին (բացառությամբ հեղինակային մեջբերումների)		
60-3	Ուսումնական նյութերում առկա են ձայնագրություններ, որոնցում պահպանված են բանավոր խոսքի առոգանությունը և բարեհնչյունությունը		

* 0 միավոր, եթե բնութագրիչի հատկանիշները բացակայում են
1 միավոր, եթե բնութագրիչի հատկանիշները մասամբ առկա են
2 միավոր, եթե բնութագրիչի հատկանիշները հիմնականում առկա են
3 միավոր, եթե բնութագրիչի հատկանիշներն ամբողջովին առկա են

** լրացվում է ըստ անրաժեշտության՝ գնահատման վերաբերյալ հատուկ մեկնաբանություն, բացատրություն ունենալու դեպքում: Ընդ որում, ծավալուն մեկնաբանությունները կարող են կատարվել առանձին A 4 ֆորմատի թղթի վրա՝ համապատասխան գրառում /հղում, տարբերանշում/ կատարելով «նշումներ» սյունակի համապատասխան տողում: Նշումների թերթիկում պարտադիր գրվում է գնահատողի անունը, ազգանունը, ստորագրությունը և կցվում է գնահատման թերթիկին:

Գնահատող՝ _____ _____

Անուն, Ազգանուն ստորագրություն

«_____» _____ 2023 թ.